ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. 2026 թվականի մարտի 6-ին ժամը 11^{00} -ին Թումանյանի համայնքապետարանում տեղի կունենա Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք,Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0108-0134 ծածկագրի 0.36356 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության կրկնամրցույթ 25 տարի ժամկետով: Մեկնարկային գինը սահմանել տարեկան 19000 ՀՀ դրամ, մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%–ի չափով, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճարի չափը՝ 10000 ՀՀ դրամ:Հողամասի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան: Հողամասի որակական հատկանիշները՝ հարթ ռելիեֆ: Մրցույթի մասնակիցներն մրցույթի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5% -ի չափով: Եթե մասնակիցը մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարը վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն:

2. Մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Թումանյանի համայնքապետարան՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական 1: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ: Հեռախոս՝ 098-048-046

: